ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թ. հունիսի 28-ից 30-ը Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անուն, ազգանունը՝

Լևոն Խալիկյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա)

28.06.2017-30.06.2017թ.

4. Հրավիրող կողմը՝

Եվրասիական Տնտեսական հանձնաժողով

5. Գործուղման նպատակը՝

2017 թվականի հունիսի 29-ին Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում կայացած՝ «Միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին չհամապատասխանող ապրանքի Եվրասիական տնտեսական միության շուկայում շրջանառությունը և շրջանառության դնելը կանխարգելելու նպատակով համագործակցության կազմակերպումը» թեմայով խորհրդակցությանը մասնակցություն:

6. Քննարկված թեմաները՝

Միության անդամ-երկրների շուկաներում Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի պարտադիր պահանջներին չհամապատասխանող ապրանքների շրջանառությունը կանխարգելելու նպատակով Միության անդամ-երկրների հսկողություն (վերահսկողություն) իրականացնող մարմինների փոխգործակցության մեխանիզմների քննարկում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Գործուղման շրջանակներում քննարկվել են մի շարք հարցեր.

- Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի հանձնարարագրի նախագիծը՝ «Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին չհամապատասխանող ապրանքների բացահայտման դեպքում Եվրասիական տնտեսական միության անդամ-երկրների հսկողություն (վերահսկողություն) իրականացնող պետական մարմինների փոխգործակցության մասին»,

- Միության անդամ-երկրների շուկաներում Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի պարտադիր պահանջներին չհամապատասխանող ապրանքների շրջանառությունը կանխարգելելու նպատակով Միության անդամ-երկրների հսկողություն (վերահսկողություն) իրականացնող մարմինների փոխգործակցության մեխանիզմների քննարկում,
- Վտանգավոր ապրանքների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման ապահովման աշխատանքների կազմակերպում:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանդիպման արդյունքում ընդունվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի հանձնարարագրի հավելվածով հաստատված «Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին չհամապատասխանող ապրանքների բացահայտման դեպքում Եվրասիական տնտեսական միության անդամ-երկրների հսկողություն (վերահսկողություն) իրականացնող պետական մարմինների փոխգործակցության մասին» կարգը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Գործուղման շրջանակներում քննարկված հարցերի արդյունքում եղել են կառուցողական առաջարկություններ, մասնավորապես առաջարկվել է Միության անդամ-երկրներից որևէ մեկում Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերին չհամապատասխանող ապրանքի շրջանառություն բացահայտելու դեպքում տեղեկացնել բոլոր անդամ-երկրներին այդ ապրանքատեսակի և դրա արտադրման երկրի մասին:

10. Գործուղվողը՝

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար Լևոն Խալիկյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը՝

11.07.2017 թ.